Շնորհավորելով դեսպանին նշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հղեց նրան:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձավ հայ և հրեա ժողովուրդների պատմական ընդհանրություններին և կարևորեց նրանց միջև առկա հարաբերությունների առավել սերտացումն ու զարգացումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև աշխարհում խաղաղության հաստատման և ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման գործում կրոնական առաջնորդների կարևոր դերակատարության մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Փետրվարի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի Խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար տիար Գեղամ Ղարիբջանյանի և երկու երկրների դեսպանների:

Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները սերտ են և բարեկամական, և հույս հայտնեց, որ առկա խնդիրներն իրենց լուծումը կստանան եղբայրական սիրո և փոխադարձ հասկացողության մթնոլորտում:

Հանդիպմանը խոսվեց Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի կարգավիճակի և հայկական եկեղեցիների վերադարձման խնդրի, ինչպես նաև վիրահայությանը հուզող այլ հարցերի մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Եկեղեցի-պետություն հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ